

# ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ Է ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԵԼՈՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԸ

27.06.2014

Հայաստանի Հանրապետությունում Բելոռուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ս. Սուխորենկոն այցելել է Կոտայքի մարզպետարան:

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն ու դեսպանը հանդիպման շրջանակներում քննարկել են համագործակցային մի շարք ուղղություններ՝ անդրադառանալով որոշակի ծրագրային առաջարկությունների և հետագա հանդիպումների պայմանավորվածությունների:

Այնուհետև մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի է ունեցել Բելոռուսի ազատագրման 70-ամյա հորելյանին նվիրված հուշամեդալների հանձնման արարողություն:

Միջոցառմանը ներկա են եղել Հայրենական մեծ պատերազմի ընթացքում Բելոռուսի ազատագրմանը մասնակցած վետերաններն ու նրանց հարազատները:

Ներկաներին ողջունել և շնորհակալական խոսքեր են հղել Ա. Հարությունյանն ու Ս. Սուխորենկոն՝ ընդգծելով Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի կարևորությունը և դահլիճում ներկա վետերանների ներդրած ավանդը այդ նշանակալի գործում:

Այնուհետև Բելոռուսի արտակարգ և լիազոր դեսպանը հանձնել է Բելոռուսի Հանրապետության Նախագահի կողմից տրված հուշամեդալներն ու շնորհակալական նամակները: